Գրիգոր Գուրգադյանը վախճանվել է կյանքի 92-րդ տարում՝ 2014թ. փետրվարի 22-ին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՐՅԱԽՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՀՅՈՒՐԵՆԿԱԿԵԼ ԵՆ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Հոկտեմբերի 16-22-ը ԱՀ ԿԳՄՍՆ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Մարտունու վարչակազմի անվան պետական արհեստագործական ուսումնարանի, Շուշիի Արսեն Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջի, «Անտոնիա Արսլան հայ-իտալական կրթահամալիր»-ի, «Եզնիկ Մոզյան» արհեստագործական ուսումնարանի վարպետների և ուսանողների համար Գյումրիում կազմակերպվեց «Մասնագիտական կրթությունը՝ բարեկեցության գրավական» կրթական ծրագիրը ՀՀ ԿԳՄՍՆ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի, «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպության, «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի և «Արցախի սոցիալական զարգացման ծրագրեր» հիմնադրամի համագործակցությամբ: Արցախի ՄԿՈՒ ոլորտի վարպետների համար անցկացվեցին վերապատրաստումներ «Մասնագիտական չափորոշչային պահանջներ», «Գործնական պարասպորտների կազմակերպման մեթոդներ», «Գործատու-ուսումնական հաստատություն համագործակցություն» թեմաներով, մասնագիտական և վարպետաց դասեր Գյումրու ՄԿՈՒ հաստատություններում, ճանաչողական այցելություններ թանգարաններ ու պատմամշակութային վայրեր, տարաբնույթ այլ միջոցառումներ:

տագործական ուսումնարանում կազմակերպվեց սեմինար կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կինա Ղարազյոզյանի նախաձեռնությամբ: «Սոցիալարական գործ» մասնագիտության շրջանավարտ Զոհրաբ Գևորգյանը փորձի փոխանակման

րիան և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ»-ը եզակի է, որտեղ պահպանվում է Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի աշխատանքների ամբողջական հավաքածուն: Ուսանողները ծանոթացան նաև Ավ. Իսահակյանի, Յ. Շիրազի, Մ. Մկրտչյանի թանգարաններում նրանց անձնական իրերին, խնամքով պահպանված ձեռագրերին, տպագիր գործերին ու մեզ փոխանցված մշակութային ժառանգությանը, որը գեղագիտական մեծ հաճույք պատճառեց այցելուներին:

որովհետև մենք կրթական, շփման, համագործակցության, փոխըմբռնման մեծ մշակույթ ենք բերել մեզ հետ: Ամուր և սերտ կապերի ստեղծման, փորձի փոխանակման շնորհիվ կարող ենք ապահովել միասնական հայրենիքի գաղափարը, ստանալ ոչ միայն գիտելիքներ ու հմտություններ, նախնական (մասնագիտական) արհեստագործական կրթության ոլորտի նորարարություններ, այլև ամրապնդել միասնական հայրենիքի ընկալման գզացողությունը: Ուսուցանող էին տարբեր մասնագիտական խմբերի մատուցած դասերը, մեծ տեղեկույթ պարունակող: Շատ բան կարելի է փոխել Արցախում, և մենք փոխգործակցության, շփման միջոցով կարող ենք հաջողություններ ունենալ, ամրապնդել մեր գիտելիքները: Ի վերջո աշխարհը գնում է դեպի արհեստների, շուկան պահանջում է արհեստավարժ մասնագետներ:



Հոկտեմբերի 19-ին անցկացվեց «Ստորջրյա հնագիտության պատմությունը և դրա զարգացման անհրաժեշտությունը Հայաստանում» թեմայով սեմինար: Այն վարեց հմուտ լրագրող Աննա Մարտիրոսյանը: Ստորջրյա առևտրային նավագնացությունների և ջրասույզ ժամանագրության մասին տրվեց համազայն մակարդակի տեղեկատվություն: Ու-

Այս միջոցառումը կայացած էր, բովանդակալից ու ցանկալի կլինի դարձնել շարունակական, ավանդական՝ ի շահ մեր երկրի տնտեսության զարգացման, հայոց հայրենիքի բարգավաճման:

լակյան զարգացման ծրագրեր» հիմնադրամի համագործակցությամբ: Արցախի ՄԿՈՒ ոլորտի վարպետների համար անցկացվեցին վերապատրաստումներ «Մասնագիտական չափորոշչային պահանջներ», «Գործնական պարասպորտների կազմակերպման մեթոդներ», «Գործատու-ուսումնական հաստատություն համագործակցություն» թեմաներով, մասնագիտական և վարպետաց դասեր Գյումրու ՄԿՈՒ հաստատություններում, ճանաչողական այցելություններ թանգարաններ ու պատմամշակութային վայրեր, տարաբնույթ այլ միջոցառումներ:

նպատակով անցկացրեց սեմինար-պարասպորտ Արցախից հյուրընկալած ուսանողների հետ: Մասնագիտական խորը գիտելիքների ու կարողությունների շնորհիվ դառնալու արդյունավետ էր և համակարգված: Պարզաբանվեցին առաջացած հարցերը, ցուցադրվեց և մանրամասն մեկնաբանվեցին խոհանոցում պատրաստվող յուրատեսակ կերակրատեսակների պատրաստման գործընթացն ու տեխնոլոգիան:



Արցախում մեծանում է հայրենասեր, ազգասեր, հայրենամակեր, կրթությունը սիրող ու գնահատող սերունդ: Տարիներ շարունակ Արցախը մեկուսացրել են, այսօր էլ ավելի են փորձում մեկուսացնել: Արցախը շարունակում է պարել, և Արցախում կրթությունը միշտ էլ եղել է առաջնահերթություն: Խորին շնորհակալություն «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ Քնարիկ Ահարոնյանին, «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի տնօրեն Արթուր Մինասյանին և «Արցախի սոցիալական զարգացման ծրագրեր» հիմնադրամի տնօրեն Սոֆյա Հովսեփյանին, որոնց նախաձեռնությամբ ու աջակությամբ կայացավ այս միջոցառումը:

Ծրագրի նպատակն է՝ բարձրացնել միջին մասնագիտական և արհեստագործական կրթության դերը երկրի տնտեսության զարգացման գործում, նպաստել ազգային արհեստների ու արվեստի տարածմանն ու պահպանմանը, ամրապնդել ուսանողների մասնագիտական կարողություններն ու հմտությունները, արժևորել մասնագիտության հնարավորությունները, արցախցի ուսանողների համար ընդլայնել կրթամշակութային ծրագրերի մատչելիությունն ու հասանելիությունը, իրականացնել փորձի փոխանակում, ամրապնդել Արցախ-Հայաստան համագործակցությունը:

Հոկտեմբերի 19-ին կազմակերպվեց Արցախի ուսանողների այցը Գյումրու թանգարան-

սանողները հետաքրքրված էին, բարձրացրին թեմային վերաբերող հարցեր:

սանողները հետաքրքրված էին, բարձրացրին թեմային վերաբերող հարցեր:

Գյումրիում յուրաքանչյուր օր գերհագեցած էր: Հոկտեմբերի 17-ին կազմակերպվեց ջերմ ընդունելություն ուսումնարանի հարկի տակ: «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի սաները մեզ դիմավորեցին մեծ խանդավառությամբ՝ ազգային երգ ու պարով, աղ ու հացով:

ներ ու գեղագիտական ազգային կենտրոնի Գյումրու մասնաճյուղ: Նրանց ուղեկցում էին ուսումնարանի ուսանողները: Քաղաքի կենտրոնում գտնվող պատմական և մշակութային վայր համարվող մուսամբերի տները վկայում են Գյումրու առօրյայի, մշակույթի հարուստ պատմական ժառանգության մասին: «Մա-

Հոկտեմբերի 20-ին տեղի ունեցան «Կարիերայի ուղղորդման կենտրոնի գործառնություններ» և «Հարցազրույցի մեղակայանալու հմտությունները» թեմաներով սեմինարներ: Երիտասարդների միջև ծավալվեց հետաքրքիր երկխոսություն «Բիզնես գաղափար» թեմայով:

Նշենք, որ համագործակցության համար հիմք է հանդիսացել այս տարվա հունիսին «Ընտանիք» ՀԿ-ի և ԱՀ ԿԳՄՍՆ-ի միջև կնքված հուշագիրը: Դրա ստորագրումից անմիջապես հետո առաջին այցը տասնօրյա ժամկետով գյումրեցիները կատարել են Արցախի Մարտունու արհեստագործական ուսումնարան և արել փորձի փոխանակում: Հուլիսի շրջանակում կազմակերպվել է նաև Արցախի ՄԿՈՒ ուսանողների ամառային ճամբարը Ստեփանավանում: Հուլիսը ենք, որ չի ուշանա նաև գյումրեցիների փոխադարձ այցը Ստեփանակերտի «Անտոնիա-Արսլան հայ-իտալական կրթահամալիր» և «Եզնիկ Մոզյան» արհեստագործական ուսումնարան:

Հոկտեմբերի 18-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական ուսումնարանում կազմակերպվեց «Մասնագիտական չափորոշչային պահանջներ» սեմինար-պարասպորտ Արցախից հյուրընկալած ուսանողների հետ: Մասնագիտական խորը գիտելիքների ու կարողությունների շնորհիվ դառնալու արդյունավետ էր և համակարգված: Պարզաբանվեցին առաջացած հարցերը, ցուցադրվեց և մանրամասն մեկնաբանվեցին խոհանոցում պատրաստվող յուրատեսակ կերակրատեսակների պատրաստման գործընթացն ու տեխնոլոգիան:

Հոկտեմբերի 21-ին ուսումնարանի և Արցախի ուսանողների միջև կազմակերպվեց «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղ-մրցույթ: Գյումրիում մեկշաբաթյա վերապատրաստման ծրագրի շրջանակներում հանդիպումներ ունեցանք Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանի և քաղաքապետ Վարդգես Սամսոյանի հետ:

Ես՝ որպես Արցախի պատվիրակության ղեկավար, շնորհակալ եմ ջերմ վերաբերմունքի, բովանդակալից հանդիպումների համար,

Բելա ՀԱԿՈՒՅԱՆ
ԱՀ ԿԳՄՍՆ մասնագիտական կրթության եւ գիտության բաժնի գլխավոր մասնագետ

ՎԵՐԱՊԱՏՐՈՒՄՍԿԵՑԻՆ ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

Հոկտեմբերի 21-ին Հայ եկեղեցու Արցախի թեմի Առաջնորդ Վրթանես Եսկև Աբրահամյանի օրհնությամբ Ստեփանակերտի Առաջնորդարանի շենքում տեղի ունեցավ կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների վերապատրաստում-սեմինար: Մասնակցում էին 36 ուսուցիչ և թեմում ծառայող հոգևոր սպասավորներ: Որպես գլխավոր բանախոս հրավիրվել էր Հրաչ ավագ սարկավագ Սարգսյանը: Քանի որ կիրակնօրյա դպրոցում հիմնական շեշտը դրված է Սուրբ Գրքի ուսուցման վրա, այս դասընթացի թեման Աստվածաշունչն էր: Բանախոսը հանդես եկավ Աստվածաշունչի մասին հինգ դասախոսությամբ: Դասախոսությունների մեջ ներառվեց այն ամենը, ինչ կապ ունի

Աստվածաշունչի հետ. բնագրային, թարգմանական, լեզվաոճական, պատմական, կանոնական, մեկնաբանական տարողունակ հարցեր: Հարստացուցիչ այս դասախոսություններն ավելի հետաքրքրական դարձան բանախոսի կողմից պատրաստված ձեռագրական պատառիկների, տպագրված «Աստվածաշունչ»-ների նկարների և բազմազան գրաֆիկների ներկայացումով, թարգմանական նրբություններով և որոշ հատվածների համարների ու բառերի քննարկումով: Լուսաբանիչ հանգամանք էր Աստվածաշունչի և այլ կրոնների Սրբազան գրքերի համապարփակ համեմատական ներկայացումը: Այնքան հետաքրքիր էր դասախոսությունը, որ ուսուցիչներն անձամբ-


րույթ ու մեծ հետաքրքրությամբ լսում էին, իսկ ընդմիջումներին հարցեր տալիս, փոխանակում մտքեր:

Սեմինարի ավարտին ԴՅԲԱ-ի կողմից ուսուցիչներին բաժանվեց Աստվածաշունչ: Ձինված Աստվածաշունչով և նրա մասին ստացած նոր գիտելիքներով՝ Աստու խոսքի սերմնացաններն այսուհետ նոր ոգով ու եռանդով կշարունակեն իրենց նվիրական առաքելությունը:

Արթուր Կարկ ԱԲՐԱՄՅԱՆ
Արցախի թեմի ԶԳԿ փոխտնօրեն

ԲԱՐՔԱՆ

ԱՐՅԱԽՑԻՆ ԲԱՌԱՍՏԵՐՆ



Լեզվաբան, բարբառագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Գուրգեն ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆԻ արխիվից

Սկիզբը՝ նախորդ համարներում

Ա

ԱՄԲԻՐ: Փռչող: ԱՄԲԻՐ ԿՅՆԱ: Փռչող: ԱՄՆԻՎԵՐՍԻՏԵՏ: Թեթևամիտ, թեթևասովոր: ԱՄՆՈՐ: Փայտի ամուր կոճղ, որի վրա փայտ, միս, ոսկոր են կտրատում: ԱՄՆԵԼ: Լարել: ԱՄՔՈՒՄ: Ողորկ, հղկած: ԱՄՋՆԸ: Հալոճ: ԱՄԵԿ: 1.Ամանի կաշվե կափարիչ: 2. Անորակ թխած հաց: 3. Պինդ հող: ԱՄՊՈՒԵԳՅ: Առջևի ատամներից մի թամիսը թափված: ԱՄՏ: Տեղյակ: Սկիզբը՝ նախորդ համարներում: ԱՄԼԼԱ: 1.Լեփ-լեցուն: 2.Ապտակ: ԱՄԻԵԿ: Ամանի՝ մորթուց կափարիչ: ԱՄԵԹԱ: Անբեռ, պնդաճակատ: ԱՄԼԳԵ: 1.Ամյուղ, անհամ (ճաշ): 2. (փխբ.) Միամիտ: ԱՄԿԸՀԱՆ: Սայթաբուն: ԱՄԿԸՀԵԼ: Սայթաբել: ԱՄՈՒԿՆԸ: Տգրուկ: ԱՄԵՍՈՒՐ: Կնոջ համար ամուսնու մայրը: ԱՄՍՎԱԼ: Կարողության, ունեցվածքի ծախս անելու ժլատ լինել: ԱՄԿԵԼ: 1.Գունատվել: 2.Հյուսիսայն կողմ: ԱՄՍՈՒՍ: Անկյունագծեր ունեցող: ԱՄԵՐՈՒԹԿ: Սովորություն: ԱՄՍԸՊԱՍՏԵԼ: Սարսառ, ցրտից դողալ: ԱՄՏԸՅԵՆԵՇ: Շատ զգայուն: ԱՄՏՈՒԶԵԼԻՔՅ: Ցանկալի ուտելիք: ԱՄԻՆԻ: 1.Ամբեն: 2. (փխբ.) Միամիտ, անփորձ: ԱՄՈՒԹՆԻԼ: Գունատվել: ԱՄԹԵԼ: Ցրտից կուչ գալ, գունատվել: ԱՄՐ: Այսոր: ԱՄՐԵ: Այսորվա ընթացքում:

Ա

ԱՄԶԿԱՆ: Լավ, արագընթաց վագոդ: ԱՄՅՐ: Թարախ: ԱՄՅՐԱԿԱԼԻԼ: Թարախակալել: ԱՄՅՎՈՐՈՒՐ: 1.Աղմուկ, աղաղակ: 2.Վայնասուն: ԱՄՇ: Ցավի, վշտի, տխրության բացականչություն: ԱՄՎԱ (մանկ.): Վերք: ԱՄՐԻՆ: 1. Շարքով: 2. Անընդհատ: ԱՄՑՑՈՒՆ: Վաթսուն: ԱՄԶ ՕՆԵԼ: 1.Գործած մեղքը խոստովանել: 2. Ստանձնել: ԱՄԽՈՒՐ: Ոչխար: ԱՄԵԼ: Հող: ԱՄՍԿԵՆ: Ոսկոր: ԱՄՏ: Հոտ: ԱՄՏԱԾ: Հոտած, նեխած: ԱՄՏԵԼ: Հոտել, նեխել: ԱՄՏԵՑ: Ոտքի վրա: ԱՄՏ ՕՆԵԼ: Հոտոտել: ԱՄՐԱՄԱ: Ավեր, անշնե, ամայի: ԱՄՐԱՄԱԻ: Բոլորովին, ամենակին: ԱՄՐԱՐԹԵԼ: Հողը, տանիքը և այլն իջնել: ԱՄՐԹՆԸ: Որթ: ԱՄՐԹՆԻԼ: Որդնել, ոջլոտվել: ԱՄՐԹՆՈՒՏ: Որդնոտ: ԱՄՐԱ: Որս: ԱՄՐՑ: Ործ, արու:

ՎԵՐՑԱԿ: Աբլոր: ՎԻՇ: Ամուր թել: ՎԻՉԻԼ: Ոջիլ: ՎԻՐԻ: Վայրի, վայրենի: ՎՂԱՆԵԼ: Արտը ժամանակին չհնձելուց սկսել փչանալ: ՎՆԱՍՎԻ: Վայնասուն: ՎՆՆԸԾԱՆԴՐ: Ծննդաբերությանը մոտ: ՎՆՆԸԾՈՑ: Մեկի գլուխը մյուսի ոտքերի մոտ: ՎՆՆԸՏՐԵՑ: Անբարոյական: ՎՆՆԸՔՐԵՅ: Վազբավճար: ՎՈՒՁ: Շատ արագ, շտապ: ՎՈՒՁԻԼ: Շտապել: ՎՈՒՎԱԼ: Վերջինը: ՎՏԱՇՈՐ: Վարտիք: ՎՐԹԱՏԵԼ: Հորթատել: ՎՐԽՎԱԼ: Հորդ հոսել: ՎՐՅԱՎՈՐ: Անընդհատ: ՎՐՉԵՄՆԸ: Մրջյուն: ՎՐՎԱՐՈՒՏ: Կռվարար, խռովկան: ՎՐՑԱՍՈՒ: 1.Տղամարդու հատկանիշներով կին: 2.Ճակնդեղագի բույսերի այն տեսակը, որ չեն ուտում, օգտագործվում է միայն որպես անասնակեր: ՎԻՐՅՅԻՋԻ ՏԱԼ: Ցատկոտելով վազվզել:

Տ

ՏԱԽ: Բտման ենթակա խոզ: ՏԱԽՏԵՐ: Պղպեղ: ՏԱԿԱՇՈՐ: Տակի շոր: ՏԱԿՈՒ: Արմատ: ՏԱՆԳՅ: Ջվալի ունկ, բռնակ: ՏԱՆԴՈՒՆԸ: Դանդուռ: ՏԱՇԻ: Ուրախության, գոհունակության ձայնարկություն: ՏԱՊՈՒ ԱՆԵԼ: 1.Լռել, 2.Համբերել: ՏԱՏԱ: (մանկ.): Հաց: ՏԵՂԱՇՈՐ: Անկողին: ՏԵՊԵՅՅ: Բորիկ: ՏԵՐՄԱՆ: Հարդ: ՏԵՐՄԱՆԱՆՈՒՑ: Հարդանոց: Մարագ: ՏԵՐՏԱԿ: Դատարկ: ՏԵՓ: Դափ: ՏԸՐ: Ձիւ կանգնեցնելու ձայնարկություն: ՏԻՇԱՆԻԼ: Հալ: ՏԻՇԱՆՈՒՑ: Հնոց: ՏԻՇԻԼ: Բազմամալ: ՏԻՔՐԱԿԵԼ: Տեգոր կին: ՏԼԱՍԵԼ: Ծծծել, դնգել: ՏԿԸԵՉԱԿ: Փոքրիկ լաչակ, որ կանայք կապում էին գլխարկի տակ: ՏԿԸՅԱԿԱԿ: Շապիկի տակի շապիկ, որ հագնում էին պառավ կանայք: ՏԿԸՅԱՆ: 1. Գաղտնի: 2.Ներքուստ: ՏԿՃՈՐ: Լայն սափոր, գինու աման: ՏԿՈՒՄԱԶ: Աղվամազ: ՏԿՍԵՐ: Խորթ տղա: ՏԿՆԻԼ: Դեղնել: ՏԿՆԿՈՒԹԵԼ: Դեմքը դեղնել: ՏԿՆԸԿՈՑ: Դեղնուց: ՏՄԱՍԿԱՆ: Դիմացկուն, տոկուն: ՏՄՐԱ: Թմբուկ, դիոլ: ՏՄՐԱՉԻ: Թմբկահար: ՏՄՔԵԼ: Ծծծել: ՏՄՔՅԱՆ ԻՆԻԼ: Շարժվել: ՏՄՔՐԵԼ: Թմբել, ընդարձանալ: ՏՄԸԿԱՆԵՐ: Դմակի յուղ: ՏՄԿԵԼ: Խոնավամալ, տամուկ դառնալ: ՏՄԿԸՑԵԼ: Տամուկ դարձնել: ՏՄՏԵՍՈՒԿ: Լնդերք: ՏՆԴՐԵԼ: Ուշադրությամբ նայել, զննել: ՏՆԸՅԱԿԱ: Տան անդամները: ՏՆՆԸՊՈՒԺՈՒԺ: Տնարար կին: ՏՈՒ: Վառել: ՏՈՒՑ: Փոքր կարաս: ՏՈՒՇ: 1.Կուրծք, 2. (փխբ.) Սարի լանջ: ՏՈՊ: Կակաջ: ՏՈՒՆԸ: Դուռ: ՏՈՏՈՆ: Օրորոց: ՏՊՏԱՊԵԼ: Տեղալ մի բան, կարոտել: ՏՈՋԻԼ: Ուռել, փքվել: 1.Նեղամալ, խռովել: ՏՈՒԼԱՇ: 1.Ազոնալի մման թռչուն, սերմնաբաղ: 2.(փխբ.) Պնդաճակատ: ՏՈՒՋՆԱՆԱԼ Քաղցել, սովածանալ: ՏՈՒՋՆԸ: Սոված, քաղցած: ՏՈՒՋՆԸՑԵԼ: Սովածացնել, քաղցած թողնել: ՏՈՒՆԴԻ: Հետույք: ՏՈՒՄ: Դուրս:

ՏՈՒՄ: Դրսի: ՏՈՒՄԿՅՈՒՄ: Դուրս, դրսի կողմը: ՏՈՒՏՈՒՑ: 1.Ուռած, դուրս ցցված: 2.Հետույք: ՏՈՒՏՈՒՇ: Երկանքի, ջրաղացքարի առանցքի երկաթե ծողը: ՏՈՒՐԱԼԻ: Դուրեկան: ՏՈՒՐՈՒՐ ԿՅԱԼ: 1.Շարժվել: 2.Ձեռնաշարժությամբ զբաղվել: ՏՓԱՇԵՏ: Ծննդուկի մի տեսակ: ՏՓԸԽՆՉՈՐ: Գետնախնձոր: ՏՓԸՇԵՐԵ: Գիշերային փոքր գիշատիչ կենդանի: ՏՓՏՓԵԼ: 1.Շոշափել: 2.Ծծծել:

Ր

ՐԱՄԱԿ ԸՆԳՆԵԼ: Մարդամեջ ընկնել: ՐԵՆԱԿ: Օրինակ, նմուշ:

Ց

ՑԱԼՈՒՆ: Շիթ: ՑԱԿԱՍ: Ցախսատ: ՑԱՔՅ: Սուր փշերով թուփ: ՑԱՔՅԻԼ: Ցաքով ցանկապատել: ՑԻՆԳՈՒ: Լիհար, վոխտ: ՑԻՐԹ: 1.Ստինք: 2.Արցունք, լաց: ՑԻՐԹԵՐԸ ՎԵՐ ԱՇԵԼ: Լաց լինելով մի բան ուզել: ՑԻՓԼԻ: Փոքր ծիպոտ: ՑՂՆԵԼ: Ցնկնել:

ՈՒ

ՈՒԼՈՒՐՈՒՆ: Աղմուկ, ժխտ: ՈՒԼՈՒՐՈՒ ԱՆԵԼ: Աղմկել: ՈՒՇԱՐ: Ունկավոր տակառ: ՈՒՇՈՒՆՑ: Հիշոց, հայիոյանք: ՈՒՇՈՒՆՑԱՍՈՒ: Հայիոյոց: ՈՒՈՈՈՒ: Անտեր այգի, բանջարանոց: ՈՒՐԹՈՒՄԵԼ ԱՆԵԼ: Երդուն: ՈՒՐԹՈՒՄԵԼ ՕՏԵԼ: Երդվել: ՈՒՐՈՒՅՈՒՄ: 1.Երեկո: 2.Երեկոյան: ՈՒՐԳՅՈՒՄԱՇԻ ՏԱԼ: Շորերը արևի տակ փռել: ՈՒՐՈՒՄ ԱՆԵԼ: Տիրություն անել: ՈՒՐՈՒՐ: Իրար: ՈՒՐՈՒՐ ԸՆԳՆԵԼ: Համաձայնության գալ:

Փ

ՓԱԽՐ: Կլայեղ թափված պղնձաման: ՓԱՇԵՐՆԸ: Փայծաղ: ՓԱՂԱՐ: Շաղախած, դեռ չհունցած խմոր: ՓԱՊԱՐՔ: Ապարանք: ՓԱՊԱՐՔ ԱՆԵԼ: Ապարել: ՓԱՍՏԻ: Գոռոզ, մեծամիտ, պարծենկոտ: ՓԵՅԻՆ: Գոմար, պարարտամյուր: ՓԸՆ: Կաղամբի չձևավորված գլուխ: ՓԹԱՎԱ: Ուտի փաթաթան: ՓԹՐԱՐ: Փշվոտ կաշուն մոխրոտ: ՓԹՐՈՒԿ: Աղբատի կերակրատեսակ: ՓԻՆՓԻՆՏԵԼ: Գիրանալ, չաղամալ: ՓԻՇՑ: Կատվին բշտելու ձայնարկություն: ՓԻՇՏԻԼ: Բշտել: ՓԻՍԻ-ՓԻՍԻ: Կատվին կանչելու ձայնարկություն:

ՓԻՐՈՒՑ: Փիփերք: ՓԼԱՔՅ: Կոճակ: ՓՇԱՇԻԼ: Ցամաքել, սկսել չորանալ: ՓՈԿ ՏԱԼ: Նվագելիս օդ ներշնչել նվագի անընդհատությունը փողային գործիքներով ապահովելու համար: ՓՈՇՑ: Փոստ: ՓՈՇՏՈՒ ԹՆԸԿԱՍԱՆ: (փխբ.) Անբարոյական կին: ՓՈՒՅՅՅ: 1.Միզափամփուշտ: 2.Պղպեղ: 3.Փուչիկ: ՓՈՓ: Երեխայի կերակուր: ՓՈՓ ՏԵՆԱԼ: 1.Պտուղը գերհասունանալ: 2.(փխբ.) Ձառամել: ՓՈՒՎԵՐ: Երեսնիվայր: ՓՄԱՅՈՒՆ: Ձմաբույք: ՓՄՈՐ: Աղբ: ՓՄՈՒՄ: Թույլ ճրագ: ՓՐԹՈՒՐ: Բրդուճ

Ք

ՔԱՐԹ: Հեքիաթ: ՔԱՐ ԱՆԵԼ: Հեքիաթ պատմել: ՔՅԱՄԱ: Ցուլ:

ՔԱՐԹ: 1.Էգ (անարգ.) Կին: ՔԱՐԹԻ: Տղամարդուն ոչ վայել գործեր կատարող տղամարդ: ՔԱՍԱԿ: 1.Կռնակ, թիկունք: 2.Հետույք: ՔԱՇ: Ազոնալ: 2.Ցատ: ՔԱՇԿ: 1. Քաջք: 2.Շատ տգեղ, այլանդակ: ՔԱՇԿՈՒՑ: Դիվահար, ցավազար: ՔԱՇԿԻԼ: 1.Հեռանալ, նահանջել: 2.Առանձնանալ: 3.Ամաչել: 4.Նկարվել: 5.Կշռվել: ՔԱՎԱՐՈՒ: 1.Ծեր, պառավ: 2. Չար ջարդ: ՔԱՐԹԵՐ: Խարտոց: ՔԵՐԾ: Քարածայր: ՔԸՍ ՏԱԼ: Շանը հարձակման մղել: ՔԹՈՑ: 1.Կողով: 2.Մեղվափեթակ: ՔԻՐԵՃ: Թնորապատին մնացած հացի շերտ: ՔԾԻԾ: 1.Չզգված բուրդ: 2.Չսանրված մագերի թջուկ: ՔԾԾԵԼ: Բամբակը, բուրդը ցնցել, մագերի թնջուկահանել: ՔՂԱՆ: Քաղիան: ՔՂԱՆԵԼ: Քաղիանել: ՔԵՍՈՒՄԿ: Քեմուխտ: ՔՄԱԿԵԼ: Քեմուխտով պատվել: ՔՆԹՈՒՆԸ: Խաղողի փոքր ողկույզ: ՔՇԱԹՈՒՄ: Մառախուղ, մշուշ: ՔՇԱՍԱԼ: Իջնել, ցածրանալ: ՔՇԵՐԵ: Գորշակ: ՔՇԸՑՆԵԼ: Իջեցնել, ցածրացնել: ՔՇԸՐՅԱՍԱԼ: Վաղ առավոտյան: ՔՇԿՈՒՆ: Հանգույց: ՔՇԿՈՒՆ: Հանգույց: ՔՇՏԵՆ: 1.Մոտը: 2.Կողքին: ՔՇՏԵՍ: 1.Մոտ: 2.Կողքին: ՔՇՏԵՑ: Մոտը, կողքին: ՔՈՒ: 1.Թուփ: 2.Անտառ: ՔՈՒՔ: Գործած կտորի վրայի մազմազուք: ՔՈՇ: Աղախիմ: ՔՈՉԱԼ: Կալսված ցորենի մնացորդ: ՔՈՒՐԸԿԱՍԵԼ: Քուռակ վիժել: ՔՈՑԻ: Փոքր կարաս: ՔՅՈՒ: 1.Չաղ, գեր: 2.Արմատ: ՔՅՈՒՄԱՆԱԼ: Չաղանալ, գիրանալ: ՔՅՈՒՔԵԼ: 1.Լարել: 2.Մեքենայով կարելուց առաջ ձեռքով բլանդել: ՔՉԵՂԱԿ: Կաչաղակ: ՔՉԵԼ: Կեղև: ՔՂԱԿԵԼ: Քեռու կին: ՔՈՒՆ: Խիճ: ՔՍԿԱՐԵՆՔՅ: Եռոտանի: ՔՐԸԹԱՆԹՈՒՐ: Քարաղորդ: ՔՅՈՒՎԻ: Քաղցր թեյ: ՔՅՈՒՆՉՈՒՊՈՒՆԱԼ: Տան անկյունները: ՔՅՈՒՆԱՇ ԻՆԻԼ: Հագնելու որևէ ուտելիքից:

Օ

ՕԹԻ: Հին հաց: ՕԽԾ: Օձ: ՕԽԾԱՆՉԻ: Օձ որսացող: ՕԽՆԸ: Ննջեցյալի յոթերորդ օրը և նրա հետ կապված արարողությունները: ՕԽՆԸ ՏԱԼ: Ննջեցյալի յոթերորդ օրը նշել: ՕԽՏԸ: Յոթ: ՕՅՈՒ: 1.Ձարմանքի և ուրախության բացականչություն: 2.Անսպասելիության, անակնկալության բացականչություն: 3.Հեզանքի արտահայտություն: ՕՅՆԸ: 1.Բռնակ: 2.Նարդախաղի փոքր հաղթանակ: ՕՆԳԱՍՆ ԸՆԳՆԵԼ: Հարմար առիթ ներկայանալ: ՕՆԵԼ: Ծածկել, փակել: ՕՆԶ: Ժանգ: ՕՆՁՈՏԵԼ: Ժանգոտել: ՕՆՁՈՒՑ: ԺԱԿՈՑ: ՕՇ: ՈՒՇԹ: ՕՇԱՓ: 1. Վիշապ: 2. Շատակեր: ՕՇԱԿ: Կավե աման: ՕՍ: Տղամարդու և կնոջ սեռական օրգանների շուրջը աճած մագերի: Օտել: Ուտել: ՕՐԱՄԱՆ: Օրավար: ՕՐԹՆԻԼ: Օրինել: ՕՐԻԳՅ ՏԱԼ: Չին թոկի տարածքով արածացնել: ՕՐԻՇ: Ուրիշ ՕՐԿՈՒՆ: 1. Հորդ անձրև: 2. Ջրհեղեղ:

ԱՆՏԱՐ ՆԵՐՈՍԵՐ

ԱԶԳԻ ՆՎԻՐՅԱԼ ԶԱՎԱԿ. ՄԱՐՄԵՆ ԳԱՄՊԱՐՅԱՆ



«Լուսարար»-ի մարզական էջը ցավով է անդրադառնում մարզաշխարհում ուրույն տեղ ունեցած, 44-օրյա պատերազմում հերոսաբար զոհված հայորդիներից եւս մեկին, որի անունը պետք է հնչել սպասվող մարզական ու մասնագիտական վերելքը նկարագրելիս, բայց, ավարդ...

Սարմեն Սամվելի Գասպարյանի անունը հնչում է եւ կշարունակի հնչել հայրենիքի պաշտպանության ժամանակ ցուցաբերած արիության եւ կյանքի գնով հայրենիքը պաշտպանելու վեհ գործի նկարագրությամբ:

Ծնվել է 2001թ. հունվարի 15-ին Ստեփանակերտում: Ապրել է մեծացել է Ասկերանի շրջանի Խնապատ գյուղում: Ավարտել է Խնապատի միջնակարգ դպրոցը, որից

հետո ընդունվել է Յայաստանի ճարտարապետական համալսարանը՝ ճարտարապետի մասնագիտությամբ: 2015 թվականից սկսել է պարապել կարատե մարտարվեստով: Սարմենի մասին մեզ պատմեց նրա մորաքրոջ որդի, կարատեի մարզիչ, սենսեյ Տիգրան Գեւորգյանը:

- Եղբայրս՝ Սարմենը, շատ էր սիրում սպորտը: Ուսման հանդեպ էլ սեր ուներ, լավ էր սովորում դպրոցում, տաղանդավոր էր, հիանալի նկարում էր: Դասերից հետո իր ազատ ժամանակը հատկացնում էր սպորտով զբաղվելուն: 2015 թվականից Արցախի ավանդական ֆեդերացիան կարատեի խմբակ ունեցավ Խնապատում, որի մարզիչը ես էի: Սարմենը առաջիններից էր, որ սկսեց հաճախել մարզումների: Շուրջ երեք տարի պարապելով իմ խմբում՝ դրսևորել էր մարզական բարձր ցուցանիշներ, գերազանց ընդունակություններ: Հասել էր չորրորդ կյու կապույտ գոտու որակավորման, ինչը մեծ արդյունք է կարճ ժամանակում պարապելու համար: Ցուցաբերած լավ տվյալների շնորհիվ նա նշանակվեց մարզիչ օգնական եւ սիրով օգնում էր ու զբաղվում էր աշակերտների հետ: Պատասխանատու էր շատ առումներով: Բնավորությամբ համարձակ էր, նպատակասլաց եւ համառ: Սիրում էր իր խոսքն առաջ տանել: Ընտանիքի ավագ զավակն էր՝ սիր-

ված եւ միշտ ծնողների ուշադրությամբ պարուրված: Իրենից փոքր եղբորն ու քույրերին խրատներ էր տալիս, ուղղություն ցույց տալիս: Կրտսեր եղբայրը՝ Դրամենը, նույնպես հաճախում էր կարատեի պարապմունքների, բայց եղբայրները տարբերվում էին իրենց պահվածքով, կարգապահությամբ: Սարմենը լավ կազմակերպում էր պարապմունքը: Պատահում էր, որ տրանսպորտի հետ կապված խնդիրների պատճառով մի քանի րոպե ուշանում էի պարապմունքից, բայց Սարմենի կազմակերպվածության շնորհիվ խումբը սկսում էր մարզանքը: Երբեմն կրտսեր եղբորը նկատողություն էր անում, երբ վերջինս լավ չէր պարապում: Բոլորին դրոճում էր կարգապահությամբ: Ինքն էլ էր երբեմն անկարգություն անում, տաքարյուն էր ու հաճախ վեճի էր բռնվում նույնիսկ իրենից մեծ մարդկանց հետ, բանակում՝ վերադասի հետ, բայց հասկանում ու շուկում էր իր սխալները, իսկ սեփական կարծիքն ու տարբեր հարցերի շուրջ սեփական գաղափարներ ունենալու համար միշտ էլ հարգանքի էր արժանանում: Կարողանում էր իրեն տիրապետել, վեճերը չէր հասցնում կռվի: Ընկերասեր էր, միշտ ձգտում էր օգնել իր ընկերներին: Սիրում էր նորություններ, սիրում էր փորձել, ուսումնասիրել: Սպորտը նրա համար կամքի ուժի, առողջությունը կոփելու, մարմինն ամուր պահելու

միջոց էր, որին հատկացնում էր իր ազատ ժամանակը: Դպրոցն ավարտելուց հետո Սարմենն ընտրեց ճարտարապետի մասնագիտությունը եւ լավ ընդունակությունների ու հարուստ գիտելիքների շնորհիվ հաջողությամբ դրսևորեց իրեն նաեւ մասնագիտություն ստանալու նախնական փուլում: Մեծ էր նրա տաղանդը: Մարդու հայացքը տեսնում էր ու ճշտությամբ նկարում: Ընդհանրապես, կարողանում էր նկարել այն, ինչ տեսնում էր: Երբեմն կատակում էր, որ մասնագիտություն ստանալուց հետո երբ գա Արցախ, ամեն ինչ փոխելու է շրջապատում, նոր ճարտարապետական լուծումներ է առաջարկելու: Ցավոք, նրա նպատակները մնացին անավարտ: 2020թ. ծննդյան զորակոչվեց ՊԲ պարտադիր ծառայության: Հաղորդվեց զորամասում էր ծառայում: Ծառայության ժամանակ էլ աչքի էր ընկնում դրական կողմերով: Ժամկետային ծառայության դեռ մեկ տարին չըլլա՞րած՝ եկավ 2020-ի մահաբեր աշունը: 44-օրյա պատերազմում ժամկետային ծառայող Սարմեն Գասպարյանն իրեն դրսևորեց որպես խիզախ մարտիկ, իսկական ազգասեր ու ընկերասեր տղա: Հաղորդվեց զորքերում էր պահում ծառայակիցների հետ: Մեծ է նրա դերը ճակատային գծի հարավային հատվածում ընթացած ծանր մարտերի ժամանակ: Աշխատում էր զննացրի

վրա: Մարտական գործողություններում աչքի էր ընկնում համարձակությամբ: Պատմում են, որ ոգին բարձր էր, ինքն էր ոգեւորում ու հուսադրում շատերին: Երբ ստացվում էր կապվել հետը, ասում էր, որ շատ են թշնամու գործերը, բայց կարողանում են ոչնչացնել, ծնողներին հուսադրում էր, որ լավ է: Երբ լսեց, որ առաջնագծում ընկերներն օգնության կարիք ունեն, մղվեց առաջ՝ օգնելու: Ասում են, որ կարող էր չզնայ, բայց նվիրյալ զավակի բնավորությունն ու ազգասիրական, ընկերասիրական մղումները չէին կարող զսպել նրան: Հոկտեմբերի 14-ին վիրավոր ընկերոջը հանելիս նա էլ գոհվեց թշնամու կրակից:

Հուղարկավորված է Խնապատի նվիրյալ զինվորականների հիշատակը հավերժացնող հուշահամալիրում: Շարքային Սարմեն Սամվելի Գասպարյանը հետմահու արժանացել է պետական բարձր պարգևի՝ «Մարտական ծառայություն» մեդալի:

Ժամկետային անվախ զինվորի, իր հողին նվիրված հայրենասեր հետո զավակի կերպարն արտահայտում է մեր համազգային կերպարը եւ օրինակ է սերունդների համար: Պետք է հզորանալ, կոփվել, պայքարել ու հասնել համազգային հաղթանակի՝ վառ պահելով մեր հետոս զավակների հիշատակը:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

Չրուցակից

ՄԵԿ ԱՆՊԱՄ ԵՎՍ ԳՐԷԻ, ԹԵՐԹԻ, ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այս հոդվածը գրելու համար առիթ հանդիսացավ մի դեպք իմ աշխատանքային տարիներից: Ուսուցչանոցում երկար դասամիջոցին խոսք բացվեց գրքի, թերթի, ընթերցանության և այլ ուղղության մասին: Ուսուցչանոցի հետաքրքրությունների մասին: Ուսուցչանոցից ոմանք պատմում էին իրենց տպավորություններն ընթերցած վերջին գրքերից, մյուսները՝ թերթում հրատարակված ուշագրավ հոդվածների մասին: Երիտասարդ ուսուցչուհիներից մեկը, որ մինչ այդ լուռ լուռ էր գործընկերների, հանկարծ վեր կացավ նստած տեղից և խորիստ ձայնով ասաց. «Ես մի գիրք մինչև վերջ դեռ կարդացած չեմ»: Ինձ թվաց, թե ինչ-որ հպարտությամբ էր դա խոստովանում: Սակայն ինձ ավելի զարմացրեց, որ ուսուցչուհիներից և ոչ մեկի դեմքին զարմանքի, հիասթափության, ինչու չէ, արհամարհանքի ոչ մի նշան չէր նկատվում: Ես ինձ չէի ների, եթե անտարբերությամբ ինքս էլ գերի դառնայի: Ուստի առաջին պատեհ առիթն օգտագործեցի նրա հետ մտերմիկ գրուցելու համար: Աշխատեցի չնախատել ու իմ վրովումը ցույց չտալ, այլ ներկայացնել գրքի դերն ու նշանակությունը: Հիշեցրի, թե ինչպես երեխաներն անուշ քնում են, երբ մայրերն օրորոցային են երգում կամ հետաքրքիր հեքիաթներ պատմում մեր հայտնի հեքիաթագիրներից: Թե ինչպես շատ ու շատ հայեր (նաև՝ հիվանդներ) իրենց բարձի տակ Նարեկացու «Մատյան»-ն են պահում և հաճախակի օգտվում որպես ոչ միայն հոգևոր բալասան: Թե ինչպես գրողներից մեկը (հավանաբար՝ Մ. Գորկին) հերթական գիրքը կարդալուց հետո խոստովանել է. «Իմ մեջ եղած բոլոր լավագույնի համար ես պարտական եմ գրքերին»: Իսկ այդ լավագույնը ազնվությունն է, բարությունը, ճշմարտախոսությունը, բարոյականությունը, դա հայրենասիրությունն է, սերը ծնողների, ընկերների, շրջապատի նկատմամբ, դա միաժամանակ պայքարն է չարի, գողի, պրոտաբույծի, ազա-հուլանի, շողոքորթության, կամակորության և այլ ոչ բարոյականության նկատմամբ: Ինձ թվաց՝ գրույցը հասնում է նպատակին, ուստի շարունակեցի. «Մեր շատ երիտասարդներ պատերազմի տարիներին փորձել են մնամկել գրքերում կարդացած իրենց սիրած հերոսներին»:

րին: Այդ մղումով էլ իրենք են դարձել հերոսներ: Հերոսներ նաև գրքերի, ուշագրավ հոդվածների: Նրանցից շատերը ոչ միայն բերանացի, այլև գիտակցումով էին հիշում Նոդեհի, Անդրանիկի, Ավոյի հրաշունչ ասույթները, թևավոր խոսքերը: Ուսուցչուհու դեմքի փոփոխությունն ինձ վերստին հուշում էր խոսքերիս ազդեցության մասին: Իմ աչքից չվրիպեց նաև այն, որ հաջորդ դասամիջոցին նա դուրս էր գալիս գրադարանից՝ թևատակին մի գիրք: Ես հայացքս փախցրի նրա հոգեկան անդորրը չխանգարելու համար: Այդ գիրքը հոգեկան սնունդ տվող երակ է, ընթերցանությունը՝ այդ երակից օգտվելու հուսալի և հաստատուն ճանապարհ: Եվ հիմա, երբ փորձում եմ խոհերս թղթի համեմատել նախընտրած թեմայի շուրջ, լինում եմ պահեք, որ չեմ կարողանում ճիշտ բառեր գտնել, բառեր, որ պետք է միտքս պարզաբանեն, պետք է որ իրենց տեղում լինեն, ու եթե դա ինձ դժվարությամբ է հաջողվում, մի ներքին ձայն հուշում է. «Այ, եթե մի գիրք ավել կարդացած լինեիր, չէիր երկմտի, չէիր դժվարանա»: Զգում եմ, որ ներքին ձայնս, իրոք, ճշմարտությունն է հուշում:

Վերջերս հանդիպեցի «Լուսարար» թերթի խմբագիր տիկին Խաչատրյանին: Թերթը 23 տարի է, գտնվում է ընթերցողի սեղանին: Զրուցեցինք, կիսվեցինք տարաբնույթ հարցերի շուրջ: Իհարկե, առանցքային հարցերը վերաբերում էին կրթության համակարգին, թերթին՝ որպես լրատվական միջոցի, գրքին, ընթերցանությանը ու այդ բոլորի նկատմամբ սառն անտարբերությանը: Խմբագիրը խիստ մտահոգված է. Ադրբեջանի կողմից Արցախի տարածքների օկուպացման և բաժանորդների տեղահանման հետևանքով թերթի տպագրանակը շուրջ երկու հազարով պակասել է վերջին 5 տարիների համեմատությամբ: Ինքս էլ դժգոհեցի թերթի էջերում երիտասարդ ուսուցիչ թղթակիցների պակասից: Խոսք եղավ համա-ցանցի՝ դրական ու բացասական կողմերի, նրանից օգտվողների համեմատական աճի մասին: Քանի դեռ մի բաժակ սուրճի շուրջ մտորումների մեջ էինք, ես փորձեցի վերհիշել հանրապետությունում լույս տեսնող թերթերը, ի՞նչ ճակատագրերի են արժանացել այդ

լրատվամիջոցները: Իրոք, կար ժամանակ, երբ հանրապետությունում լույս էին տեսնում տասնյակից ավելի թերթեր: Դրանց մի զգալի մասը հասանելի էր հանրության մի սովորական ծածկով, թեկուզ ոչ ուղղակի ճանապարհով: Այդ ճանապարհներն անցնում էին դպրոցի և համայնքապետարանի միջով: Այդ թերթերից շատերը (նաև՝ կուսակցությունների) գրողների միության, արհմիության, վաղուց գյուղական բնակավայրերում ընթերցողներ չեն փնտրում: Բացառություն է կազմում «Ապառաժ» թերթը, որը հասանելի է ինչպես ուսուցչական կոլեկտիվին, այնպես էլ համայնքապետարանի աշխատողներին: Համայնքներում տարվող աշխատանքները թերթի մտահոգությունների դաշտում են: Երբեք թերթերի խմբագիրները («Ազատ Արցախ» թերթը ոչ մի ժամանակ էլ հասանելի չի եղել) հավանաբար խոսափում են ընթերցասեր լսարան ունենալու համար ավելորդ քաջբռնկներից: Այս նշումներն արեցի՝ համեմատության մեջ դնելու համար «Լուսարար»-ի հետ: Պարզ երևում է, որ «Լուսարար»-ն այս թերթերի հետ եզրեր չունի իր տպագրանակով ու ծավալով: Ընթերցողներին հասանելի լինելու իր դժվարություններով, ոչ ոչուրին լինելով իրականացնում է խմբագիրը: Այս տեսակետից խմբագիր Ս. Խաչատրյանի արածը քիչ է ասել համեստ աշխատանք է. այն վազք է հիշեցնում, այն էլ՝ արգելափակողներով: Նրա աշխատանքի մեջ անհավանական ու զարմանալի միախուսվել ու դարձել են մի ամբողջություն: Բույնն թանկարժեք ժամանակ է խմբագրի համար: «Լուսարար»-ը եղել է մնում է հանրապետության ուսուցչների անփոխարինելի խորհրդատուն, անաչառ գրուցակիցը, լավի ու բարու սերմնացանը: Թերթը մեզ հուշում է կրթական համակարգում տեղի ունեցող բարեփոխումների մասին: Նրա էջերում տպագրվող ուսումնադաստիարակչական հոդվածները մեթոդական լավ օգնություն են ինչպես սկսնակ ուսուցիչների, այնպես էլ բոլոր նրանց համար, ովքեր գիտակցում են, որ կրթությունը նույնպես զարգացող գիտություն է, ուսուցիչը՝ նրա շարժիչ ուժը: Ազգի փրկությունը կրթության

մեջ է, և «Լուսարար»-ը դա լավ է գիտակցում ու առաջնորդվում է այդ սկզբունքով: Լինելով հավատարիմ «Մի ծաղկով զարուն չի գա», «Մի ձեռքը ծափ չի տա» թևավոր խոսքերին՝ ավելի համախմբվեց հարազատ թերթի շուրջ: Մեր հանրության մեջ կան շատ լավ մանկավարժներ, մտավորականներ, ուստի գերազանահատելի է նրանց առաջավոր փորձի տեղեկացված լինելը: Շատ կան լավ լրագրողներ, որոնց գրիչը կյանքի գարկերակն է: Ուրեմն՝ փորձեք շատ թե քիչ օգտակար լինել երիտասարդ սերնդին, նրանց՝ կյանքի ճիշտ ճանապարհը ընտրելու գործին: Այս վերջին նախադասությունը գրելիս ակամայից մի բան հիշեցի (եթե հիմա չանդրադառնամ, ինձ թվում է, էլ առիթ չեմ ունենա): «Բարեկամիս տանն էի: Դուռը բացվեց, ու ներս մտավ նրա մոտիկ ընկերներից մեկը որդու հետ և հայտնեց, որ որդին ավարտել է միջնակարգը: Եվ խնդրեց նրա հետ մի քիչ ֆիզիկա պարապել բուհ ընդունվելու համար (բարեկամս ֆիզիկայի մասնագետ է): Նա համաձայնվեց: Մինչ գրուցում էինք դեմից-դեմից, նա տղային մի հասարակ քառակուսի հավասարում առաջարկեց լուծել՝ տալով թուղթ ու գրիչ: Երբ եկավ բաժանման պահը, բարեկամս նկատեց, որ տղան չի լուծել առաջարկանքը: Ընկերը մի քիչ նեղացած դժգոհեց. «Ես ասում եմ ֆիզիկա պարապես, բայց...»: «Եթե աշակերտը քառակուսի հավասարում լուծել չի իմանում, նրա հետ ֆիզիկա պարապելն անիմաստ է», - հանգիստ ասաց բարեկամս ու հրաժեշտ տվեց ընկերոջը: Իսկ ես կավելացնեմ հետևյալը. «Եթե աշակերտը հեռու է գրքից, ընթերցանությունից, բոլոր առարկաների յուրացումը խիստ դժվար կլինի: Քանի որ թերթի բաժանորդագրությունը սարքի հետևում չէ, սատար կանգնեք մեզ վաղուց հարազատ դարձած, մեր խոհերին, մտորումներին, առաջարկություններին, մեր կարծիքներին համբերատար արձագանքող, մեզ հետ կիսվող, մեզ հետ պայքարող «Լուսարար»-ին:

Լեոն ԱՌԱՔԵԼՅԱՆ Գ. ՏԻՆՉԱՆ

«ԼՈՒՍԱՐԱՐ»-Ի ԷԶԵՐԻՑ

ԱՆՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾԸ՝ ԼՈՒՍԱՎՈՐ ՇԵՏՔԻ ԱՈՂԱՎԱՏՉՅԱ

Նրա անունն այսօրվա ընթերցողին գուցե քիչ բան է ասում, որովհետև էությանը երբեք ինքնամատույց չէր: Ապրում էր իր բազմամյա ընտանիքի, գյուղի, երկրի հոգսերով և այդ մեծ սերը կարողանում էր տեղավորել բռնաչափ սրտի մեջ: Դրանից է երևի, որ սիրտը հազիվ 54 տարի դիմացավ...

Մասնագիտությամբ մանկավարժ էր, բայց մասնագիտությունից զատ տարբեր ժամանակներում այլ ոլորտներում էլ աշխատեց, այդ թվում հայրենի Ղշլաղ (Ծաղկաշատ) գյուղի համայնքի ղեկավարն էր: Այս կենսագրական տվյալները հրաշալի գիտեն նրա համագյուղացիները և նրանք, ովքեր գործի բերումով երբևէ առնչվել են նրան: Նաև գիտեն, որ Կառլեն Սողոմոնյանը շնորհքով ստեղծագործում էր: Նրա խոհափիլիսոփայական չափածո դատողությունները, տարաթեմա հոգվածոները մի որոշակի փուլում ակտիվորեն տպագրվում էին խորհրդային ժամանակում: Նույնիսկ գայթակղություն ունեցավ լրագրության բնագավառում աշխատելու, և հաստիքային աշխատավայրը Ասկերանի «Կարմիր դրոշ» թերթն էր:

Շեշտենք, որ այն ժամանակներում անգամ ցածր ստեղծագործական կարողություններով էին գյուղից քաղաք տեղափոխվում, խնամի-բարեկամական զարտուղիներով սողակում խմբագրատներ, կոմերիտական-կուսակցական ատյաններ, կեղծ-անշնորհք մակարդակներում փորձում փայլատակել: Ունենալով աստվածատուր շնորհք՝ Կառլենը չընտրեց շլացման ճանապարհը, իր կարիերայի ամենակարգում թողեց ամեն ինչ ու վերադարձավ հայրենի գյուղ: Իսկ գյուղում կարիերա չեն ստեղծում, գյուղում արարում են, բարեկամ-դրացու հոգսերով ապրում:

Լինելով բազմամյա ընտանիքի զավակ՝ ինքն էլ շատ երեխաներ ունեցավ՝ վեց արցախաչք զավակ: Իր կենսակերպով վարակեց ընկերներին և նույնիսկ խորհրդային անծայրածիրներում բնավորված համագյուղացիներից շատերին հորդորեց, ետ բերեց հայրենի գյուղ, նոր տներ հիմնել տվեց: Եթե սա որակում ունի, ապա միայն հայրենասիրություն կարելի է անվանել:

Գյուղական հոգսերի ամհատում շարանի մեջ էլ Կառլենը շարունակում էր իր համար

ստեղծագործել: 1996-ին սեփական միջոցներով Ստեփանակերտի «Պոլիգրաֆ» ձեռնարկությունում հրատարակեց «Մտերմիկ խաթեր» առաջին ու վերջին գրքույկը: Խստապահանջ գրաքննադատությունը, սակայն, չդարձավ նրա քննադատը: Կային նաև ինքնադատաստանության իրավունքով օժտված անհատներ: Մեր օրերում չտեսնված երևույթ էր՝ հրատարակությունից անմիջապես հետո գրքի ամբողջ տպագրանակը, ինչպես նրա մտերմներն են վկայում, 999 օրինակ, չկամության մղումով բռնագրավվեց ու հրի ճարակ դարձվեց: Փրկվեց ընդամենը մեկ օրինակ, այն էլ երկի Կառլենի ամենախիզախ մի մտերմի համարձակության շնորհիվ: Ինքը՝ հեղինակը, ֆիզիկական ծանր խնչոտանգումների ենթարկվեց: Թերևս առողջական նկատառումներն էին պատճառը, որ իր երկրին ու հողին սիրահարված գրող-մանկավարժը ստիպված էր լքել հայրենի Արցախը:

Վերադարձավ, երբ լուր առավ, որ Ղարաբաղում արդարությունն ու օրենքը կրկին գերակայում են: Նորից աշխատանքի անցավ հարազատ դպրոցում, իսկ 2008-ից նաև

դպրոցի տնօրենն էր: Սակայն կարճ տևեց նրա գործունեությունը, քանզի հոկտեմբերի 23-ը նրա երկրային կյանքի վերջին օրն էր: Սիրտը չդիմացավ...

Ասում են՝ ծառը կտրելուց հետո է երևում բնի իսկական հաստությունը: Ափսոսա՛լ Կառլենի լիարժեք չպտղավորված գրական շնորհքի, մինչև վերջ չդրսևորված մանկավարժական տաղանդի, չիրագործված ղեկավարական ջիղի, թե՛ պարզապես հայ մտավորականի նրա բարձր նկարագրի համար: Ո՛չ միայն. այս համակցություններին առանց վարանելու կարելի է ավելացնել նրա ազնիվ մարդկային կերպարը: Ազնիվ՝ բառի ամենաիսկական իմաստով, քանզի Կառլեն Սողոմոնյանն իր ապրած 54 տարիների ընթացքում միայն այդպիսին է եղել:

Իսկ նրա՝ ոչ սովորական մահկանացու լինելը կվկայի ամբողջացված ու վերահրատարակված գիրքը՝ որպես թողած լուսավոր հետքի առհավատչյալ:

Ներկայացնում ենք մի փունջ այդ գրքից:

Սվեդլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կառլեն ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

- Արա՛, լսալը՛ս, որ թուրքերին կամանդիրը ուրանց ռոտան մի փլստրատե տալիս սնավար ա պերալ, թա մի չի կյաք, սա սեկրետնի արուժի ա: Եվ մինչև մենե՞ց հալա մի չըն կյան դնգլենետ, գյուղումըն թա դորթ ու դորթ արուժի ա:

- Արա՛, դանգլան տուվըս, բյալքաս լիա արուժի ա՛:

- Արա, քեզ ասումըն սնավար ա, տու ասումըն արուժի ա՛:

- Պա խե տյու գյուղում չը՛ս մեր պատմությունը. հայերին վեչ նետ ու աղեղավ, վեչ էլ ատոմնի բոմբավ կարել չըն հաղթին, բայց կրուզի ստոլեն շուրջը չայ խմելավ հաղթումըն: Հալքաք էդ են սնավարն ա:

- Արա, համաձայնը՛ս ետ տեռնաս Բաքու, տներիտ տըրթուն անիս:

- Պա հինչը՛ն, մենակ մի պայմանավ:

- Հի՛նչ պայմանավ:

- Վեր Բաքուն էլ սուս ու փուս մի մնեն Ղարաբաղեն կազմին մաչը:

- Արա սկացալը՛ք վեր Մակեդոնացին նղացած զանգ ա տվալ ՄԱԿ-են մեծին, թա՛ տնաչեն, վեր Ղարաբաղեն հարցեն նման յղալի հարց ա իլալ, խե՞՞ «Գորոյան հանգույց»-նըք՝ ինձ տեն ըրալ:

- Արա, էս ժողովուրդեն վիճակը հո՛ւնց ա իննական, վեր ստի քյինա:

- Լյավ ա իննական:

- Հինչը՛ս գյուղում:

- Էն օրը տեսնող ա իլալ,

«ՄՏԵՐՄԻԿ ԽԱՅԹԵՐ» ԳՐՔԻՑ

Ստեփանակերտա ժողովումը մի վաժնի ղեկավար գինիշկումը զամետկա ա ըրալ:

Տագնապահար կոլեկտիվի անդամները հավաքվում են ու.

- Դուք լսալը՛ք, վեր մեր անճարակ պետը աշխատանքից ազատել է Սահակին:

- Սահակի՛ն: Բայց չէ՞ որ նա կոլեկտիվի ամենագիտունն է:

- Ամենախելացին:

- Ամենաբարեխիղճը:

- Ամենահամարձակը:

- Նա կոլեկտիվի շարժիչ ուժն է:

- Ախ այդ պետը միսներս կերավ, անիծվի՛ նրա թիկունքը:

- Վայնասունով բան չի լինի, պետք է համատեղ ուժերով մի բան մտածենք ու փրկենք այդ արդար մարդուն, մեղք է:

- Առաջարկություն կարելի՞ է:

- Խնդրեն:

- Եկեք ամբողջ կոլեկտիվով խնդրենք Սահակին, որ մի քիչ ջանա տգետ ու շողոքորթ երևալ, զուցե խղճա՞ պետը, ու փորձանքից ազատվի:

Առաջարկը խելացի համարվեց: Ելքը գտնվեց:

- Լսի՛ր, դու չգիտես՞, Հայկին հաջողվե՞ց պաշտպանել դիսերտացիան, թե՞ ոչ:

- Ոչ:

- Ինչո՞ւ:

- Արգելված թեմա էր ընտրել՝ «Ինչո՞ւ բոլորը վախենում են մեկից»:

- Ի՞նչ տվյալներ ունեք էլ լինելու համար:

- Քացի են տալիս:

- Հիմա բոլորն են քացի տալիս:

- Լավ գռռում են:

- Հիմա բոլորն են լավ գռռում:

- Գիտե՞ք, նրան ընտրելիս ես էլ եմ ծայր տվել:

- Հա՛, դե միանգամից ասեիք, էլի:

- Լսի՛ր, դու չգիտես՞ այս հռչակավոր Անձը անցյալում ով է եղել:

Մյուսը՝ սարսափահար նայելով չորս կողմը.

- Լռի՛ր, նա անցյալ չունի:

Պետ էի: Մի օր մի գործի համար փող առաջարկեցին:

- Լսի՛ր,- ասացի,- մի խորհուրդ տամ քեզ. դու ինձ մի՛ փչացրու, հասկացա՞ր:

Իսկ նա՝

- Հասկացա: Արի մի խորհուրդ էլ ես տամ քեզ:

- Խնդրեն:

- Դու էդ պաշտոնը անտեղի մի փչացրու, արի դիմիր ու հեռացիր, հասկացա՞ր:

Հասկացա ու այդպես էլ արեցի:

- Բռնությունն արքա, ինչո՞ւ քո իշխանությունը անգոր է թռչունների հպատակեցնելու:

- Դա ինձնից չէ, դա իրենցից է, այդ թևավորները սողալ չգիտեն:

- Արա, «Պըլը-Պուղի» կըզեթան մին համար ա ընգալ ծերքս, սամսեն ծիծաղելի պեն չի իլալ մաչին:

- Ը՛մ, դե դուրմուցիքի Պըլը-Պուղին միշտ

ծիծաղելի՞ս չի իլալ հու, դաթումը սյուրոզնի էլ ա իլալ, հալքաք էն սյուրոզնի վըխտանց համարըն ա իլալ:

Ծնողը՝ լավ սովորող զավակին.

- Մի՛ կարդա, որ մարդ դառնաս, ա՛յ բալա, քանի՞ անգամ եմ ասել, որ կարդացած մարդու ժամանակը չէ հիմա:

Սեփականաշնորհման նախօրյակին գյուղական ժողովում գյուղացիներից մեկը դիմում է գյուղապետին.

- Պարոն գյուղապետ, դու սկի մեզ մոտ գրանցված էլ չես, էդ որտեղի՞ց ես ընկել մեր մոտերքը, որ մեր հողերի բաժանելուն ախպերանում ես:

- Լուսինից եմ ընկել, քո ի՞նչ գործն է:

- Հա՛, բան չեմ ասում, ցավդ տանեն, ասում եմ բարձր տեղից ես ընկել, մի բան պատահա՞ծ չլինի հանկարծ:

- Ինչպե՞ս եք, տե՛ր հայր:

- Ոչինչ, որդյակ իմ, ապրում եմ Բարձրյալի հովանավորության տակ: Դո՞ւ ինչպես ես:

- Ես էլ ոչինչ, տե՛ր հայր, ապրում եմ բարձրերի հովանավորության տակ:

- Հանես, աղքատի նպատակն ի՞նչ է:

- Հարուստ դառնալը:

- Բա չքավորի նպատակը՞:

- Աղքատ դառնալը:

- Վահ, բա հարուստի նպատակը՞:

- Դա արդեն ինքն էլ չգիտի:

ԿՈՐԵԼ Է

Լենա Ռոմանի Հարությունյանի՝ միջնակարգ կրթության N 824830 համարի ատեստատը՝ տրված Ստեփանակերտի հ.8 միջնակարգ դպրոցի կողմից 1983 թվականին: Համարել անվավեր:

Վլադիմիր Աշոտի Խանանյանի՝ միջնակարգ կրթության ԱԱ N151659 ատեստատը՝ տրված Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի կողմից 2016 թվականին: Համարել անվավեր:

Իննա Գուրգենի Ալեքսանյանի՝ AN 084956 համարի ատեստատը՝ տրված Ստեփանակերտի հ.2 միջնակարգ դպրոցի կողմից 1992 թվականին: Համարել անվավեր:

ԼՈՒՍԱՐԱՐ | Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ | Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info | Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: | Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պյուն» ՄՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության 01.11.2022թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: